

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Լիլիթ Մանվելի Պետրոսյան Արփինե Մեխակի Կյուրեղյան

Հոդվածը ստացվել է՝ 28.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 30.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: ՀՀ-ում կոռուպցիայի նվազեցման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես հաշվի առնելով այն, որ կոռուպցիայի խորացումը և ընդլայնումը բերել են ծանր սոցիալ-տնտեսական հետևանքների, ինչպիսիք են՝ աղքատության, գործազրկության մակարդակների բարձրացումը, ինչպես նաև՝ եկամուտների կրճատումն ու անհավասարաչափ բաշխումը: Բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել ինչպես օտարազգի և հայազգի հետազոտողների կողմից ուղղված կոռուպցիայի առաջացման նախադրյալներին, կոռուպցիոն ռիսկերի գնահատման հնարավորություններին և դրանց ազդեցությանը տնտեսության առանձին ոլորտների վրա, այդուհանդերձ, կոռուպցիան պետական և մասնավոր հատվածներում դեռևս շարունակում է մնալ անհաղթահարելի:

Հաջողության հասնելու նախապայմանը հետևողական հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումն է, ուղղված՝ պետական կառավարման համակարգում բարեփոխումների իրականացմանն ու հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:

Հոդվածում իրականացված վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել են ստվերային շրջանառության ծավալներն օլիգոպոլ շուկաներում, ինչպես նաև գնահատվել են կոռուպցիայի առաջացման հետևանքով սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը նպաստող ռիսկերը:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է՝ բացահայտել սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների շուկաներում ստվերային տնտեսության և կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեխանիզմները ՀՀ-ում և այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավորությունները առաջին անհրաժեշտության ապրանքատեսակներից շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում,
- գնահատել ստվերային տնտեսության մեծությունը պարենային ապրանքների տեսանկյունից,
- մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմ:

Գրականության վերլուծություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել կոռուպցիայի և ստվերային տնտեսության վերաբերյալ շրջանառության մեջ ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի տարբեր տնտեսագետների աշխատությունները (Т.Н. Синюкова¹, В.М. Есипов², Е.Н. Dominik³, F. Schneider⁴, Վ.Լ. Հարությունյան⁵, Ք.Յու. Բաղդասարյան⁶, Լ.Մ. Պետրոսյան⁷) և ինտերնետային կայքեր:

Մեթոդաբանություն: Հետազոտությանն համար տեղեկատվական հիմքերն են ծառայել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ Կենտրոնական բանկի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից հրապարակած պաշտոնական տվյալներն ու հրապարակումները: Կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության մեթոդներ և գործիքներ:

Հետազոտության արդյունքները: Կոռուպցիայի մեծությունը գնահատվել է պարենային ապրանքների (շաքարավազ, կարագ, բուսական յուղ) տեսանկյունից՝ նպատակ ունենալով ցույց տալ մոնոպոլ դիրք ունեցող ապրանքների մասով ոչ ֆորմալ գործարքների առկայությունը և մասշտաբները, հատկապես այն, որ դրանք առաջնային ազդեցություն են ունենում սոցիալ-տնտեսական մակարդակի վրա, մասնավորապես, բնակչության այն խավի վրա, որոնք ցածր եկամուտներ ունեն:

¹ Синюкова Т.Н., «Понятие и подходы к содержанию коррупции», Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России. Выпуск № 1 (29) – 2015, с. 333-337.

² Есипов В.М., Теневая экономика: Учебное пособие. М.: ОН и ПНО Московского института МВД России, 1997, с. 19.


³ Enste H. Dominik, The Shadow Economy and Institutional Change in Transition Countries: Keln 2002, p. 18.

⁴ Schneider F., Shadow Economies and Corruption All Over the World: New Estimates for 145 Countries, Economics, 2007 July, p.41

⁵ Հարությունյան Վ. Լ., «Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2019թ., 200 էջ:

⁶ Բաղդասարյան Ք. Յու., Հարությունյան Ա. Ա., Հարկման ատերկրյա առաջավոր մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2011թ., 160 էջ:

⁷ Պետրոսյան Լ.Մ., «Հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, դասակարգման սկզբունքները և գործառնությունները», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ», Գիտական հոդվածների ժողովածու - 1(4) - Երևան, Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2021թ., էջ 320-327:



Գծապատկեր 1. 2010-2019 թթ. շաքարավազի շրջանառությունը բնութագրող ցուցանիշները ՀՀ-ում (մլն.դրամ)¹

Շաքարավազի շուկայի ուսումնասիրության արդյունքում և **գծապատկեր 1-ի** տվյալների համաձայն, 2010-2017թթ. շաքարավազի սպառման նորմայի ծավալները գերազանցել են շաքարավազի փաստացի սպառման ծավալները, բայց ոչ շաքարավազի շրջանառության ծավալները: Իսկ 2019 թվականին 2017 թվականի համեմատ շաքարավազի շրջանառության ծավալները, սպառման նորման և փաստացի սպառումը նվազել են համապատասխանաբար՝ 13.6 մլն. դրամով, 11.7 մլն. դրամով և 4.3 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ ՀՀ բնակչությունը, այսպես ասած, «քաղցր ուտող չէ»:

Ըստ այդմ, մեր կողմից մշակվել է բանաձև, այն մոտեցում է՝ հաշվարկման միջոց, որը հնարավորություն է տալիս պետության համապատասխան իրավասու մարմիններին ուշադրություն դարձնել պարենային ապրանքների մատով ստվերի առաջացմանը:

$$SH = \frac{(SIM - SC) - SCR}{GDP} \times 100\% \quad (1)^2$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է (%),

SIM-ը՝ շաքարավազի ներմուծման ծավալն է (մլն.դրամ),

SC-ը՝ շաքարավազի փաստացի սպառումն է (մլն.դրամ),

SCR-ը՝ շաքարավազի սպառման նորման է (մլն.դրամ),

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է (մլն.դրամ):

(1) բանաձևի հաշվարկման արդյունքում բացահայտվել է, որ շաքարի ստվերի շրջանառության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 2016 թվա-

¹ Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակների կողմից, որտեղ տվյալները ներկայացվել են մլն. դրամով, իսկ նախնական տվյալները վերցվել են ՀՀ ՎԿ կայքից <https://armstat.am>: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել:

² Բանաձև (1)-ը մշակվել է հեղինակների կողմից:

կանին: Դա բացատրվում է նրանով, որ հենց այդ տարում վարչարարական գործընթացների արդյունավետությունը, թե՛ վերահսկողության, թե՛ մաքսային վերահսկողության, և թե՛ հարկային վարչարարության մասով, եղել է շատ թույլ, ինչը հնարավորություն է տնտեսվարողներին մոնոպոլ դիրք գրավել և շուկայում ունենալ մենաշնորհային կարգավիճակ՝ ռազմավարական նշանակություն ունեցող առաջին անհրաժեշտության ապրանքների իրացում կազմակերպելու և ստվերային գործարքների մասով պատասխանատվություն չկրելու համար (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աշխատանքում պարենային ապրանքներից դիտարկվել է կարագը:

Հերկ է նշել, որ 2017 թվականին 2010 թվականի համեմատ կարագի շրջանառության ծավալները ավելացել են 7.6 մլն. դրամով, իսկ սպառման նորմայի ծավալները ավելացել են 23.7 մլն. դրամով, սակայն փաստացի սպառումը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 0.9 մլն. դրամով, պայմանավորված գների աճով:


Մասնավորապես, 2017 թվականին 2010 թվականի համեմատ կարագի գները աճել են 1447 դրամով, իսկ 2019 թվականին 2017 թվականի համեմատ կարագի շրջանառության ծավալները ավելացել են 6 մլն. դրամով, սակայն, սպառման նորմայի ծավալները և փաստացի սպառումը ևս ավելացել են համապատասխանաբար՝ 19 մլն. դրամով և 3.6 մլն. դրամով, չնայած նրան, որ կարագի շուկայական գինը 2019 թվականին 2017 թվականի համեմատ ավելացել է 918 դրամով, բացատրվում է նրանով, որ կարագը սպառման առաջին անհրաժեշտության ապրանքատեսակ է և, հետևաբար, սպառվում է անկախ գնի բարձրացմանը (տե՛ս՝ գծապատկեր 2-ը):



Գծապատկեր 2. 2010-2019թթ. կարագի շրջանառությունը բնութագրող ցուցանիշները ՀՀ-ում¹

¹ Գծապատկեր 2-ը կազմվել է հեղինակների կողմից, որտեղ տվյալները ներկայացվել են մլն. դրամով, իսկ նախնական տվյալները վերցվել են ՀՀ ՎԿ կայքից <https://armstat.am>: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել:

ՀՀ-ում կարագի գների բարձրացման պատճառներից մեկը փոխարժեքի տատանումն է, որը 2019 թվականին 2010 թվականի համեմատ աճել է 106 դրամով, սակայն, 2019 թվականին 2018 թվականի համեմատ նվազել է 4.05 դրամով (**տես՝ գծապատկեր 3-ը**), ինչպես նաև՝ կարագի միջազգային շուկայական գների բարձրացումը:



Գծապատկեր 3. 2010-2019 թթ. կարագի շուկայական միջին գնի և փոխարժեքի դինամիկան ՀՀ-ում (դրամ)¹

Սակայն, 2010-2013թթ. և 2015 թվականին կարագի փաստացի սպառման ծավալները գերազանցել են շրջանառության ծավալները, ուստի աշխատանքում առաջարկվել և հաշվարկվել է բանաձևը (2) կարագի ստվերի շրջանառությունը:

$$SH = \frac{BCir-BC}{GDP} \times 100\% \quad (2)^2$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է (%),

BCir-ը՝ կարագի շրջանառության ծավալն է (մլն.դրամ),

BC-ը՝ կարագի փաստացի սպառումն է (մլն.դրամ),

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է (մլն.դրամ):

Հաշվարկման արդյունքում՝ 2010-2015թթ. կարագի սպառման ծավալները գերազանցել են կարագի շրջանառության ծավալները, բացառությամբ՝ 2014 թվականի (կարագի շրջանառության ծավալները գերազանցել են սպառման ծավալները 3.7 մլն. դրամով), իսկ 2016-2019թթ. կարագի շրջանառության ծավալները գերազանցել են սպառման ծավալները:


Հետևաբար, դիտարկվող ցուցանիշների միջև առկա տարբերությունները մյուս տարիներին կազմել են՝ 2010 թվականին՝ -7 մլն.դրամ, 2011 թվականին՝ -

¹ ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝ «Պարենային ապահովություն և աղքատություն», «Գներ և գների ինդեքսներ», 2010-2020թթ., www.armstat.am: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել: ՀՀ Կենտրոնական բանկ՝ «Փոխարժեքների արխիվ», 2010-2019թթ., www.cba.am: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել:

² Բանաձև (2)-ը մշակվել է հեղինակների կողմից:

1.8 մլն.դրամ, 2012 թվականին՝ -2.7 մլն.դրամ, 2013 թվականին՝ -1.9 մլն.դրամ, 2015 թվականին՝ -0.8 մլն.դրամ: Այսինքն՝ 2015 թվականին 2010 թվականի համեմատ կարագի շրջանառության ծավալների միջև առկա տարբերությունը նվազել է 0.11 անգամ: Ըստ այդմ, կարագի մասով ստվերային տնտեսության ցուցանիշները 2019 թվականին 2010 թվականի համեմատ նվազել են (20.2%-ից 0%), ինչը պայմանավորված է բուսական յուղի մասով ստվերի ծավալների ավելացմամբ, որին նպաստել են նաև կարագի գների աճը և կարագի փոխարինումը բուսական յուղով (**տե՛ս աղյուսակ 1-ը**):

Ուսումնասիրելով բուսական յուղի շուկան, նկատենք, որ 2010-2019թթ. բուսական յուղի շրջանառության և փաստացի սպառման ծավալները ավելացել են, իսկ սպառման նորմայի ծավալները՝ նվազել, մասնավորապես, 2019 թվականին 2010 թվականի համեմատ բուսական յուղի շրջանառության և փաստացի սպառման ծավալները ավելացել են համապատասխանաբար՝ 2.8 մլն. դրամով և 2.4 մլն. դրամով, իսկ սպառման նորմայի ծավալները նվազել են 1.6 մլն. դրամով, սակայն, 2019 թվականին 2018 թվականի համեմատ բուսական յուղի շրջանառության, փաստացի սպառման և սպառման նորմայի ծավալները նվազել են համապատասխանաբար՝ 1.1 մլն. դրամով, 2 մլն. դրամով և 0.7 մլն. դրամով: Սակայն, դիտարկվող ժամանակահատվածում բուսական յուղի սպառման ծավալները շրջանառության ծավալներից և սպառման նորմայից ավելի քիչ են կազմել:



Գծապատկեր 4. 2010-2019 թթ. բուսական յուղի շրջանառությունը բնութագրող ցուցանիշները ՀՀ-ում (մլն.դրամ)¹

Ըստ այդմ, աշխատանքում առաջարկվել է բանաձև (3), որի հիման վրա հաշվարկվել է բուսական յուղի ստվերի շրջանառությունը:

$$SH = \frac{(VOCir - VOC) - VOCN}{GDP} \times 100\% \quad (3)^1$$

¹ Գծապատկեր 4-ը կազմվել է հեղինակների կողմից, որտեղ տվյալները ներկայացվել են մլն. դրամով, իսկ նախնական տվյալները վերցվել են ՀՀ ՎԿ կայքից <https://armstat.am>: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել:

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է (%),

VOCir-ը՝ բուսական յուղի շրջանառության ծավալն է (մլն.դրամ),

VOC-ը՝ բուսական յուղի փաստացի սպառումն է (մլն.դրամ),

VOCN-ը՝ բուսական յուղի սպառման նորման է (մլն.դրամ),

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է (մլն.դրամ):

Դիտարկվող ցուցանիշների միջև առկա տարբերությունները կազմել են՝ 2010 թվականին՝ -8.8 մլն.դրամ, 2011 թվականին՝ -9.9 մլն.դրամ, 2012 թվականին՝ -3.5 մլն.դրամ, 2013 թվականին՝ -4 մլն.դրամ, 2014 թվականին՝ -4.3 մլն. դրամ, 2015 թվականին՝ -11.7 մլն.դրամ, 2016 թվականին՝ -11 մլն.դրամ, 2017 թվականին՝ -9.4 մլն.դրամ, 2018 թվականին՝ -8.4 մլն.դրամ, 2019 թվականին՝ -6.8 մլն. դրամ: Այսինքն՝ 2019 թվականին 2010 թվականի համեմատ կարագի շրջանառության ծավալների միջև առկա տարբերությունը նվազել է 0.8 անգամ: Բուսական յուղի մասով ստվերային տնտեսության ցուցանիշները 2019 թվականին 2010 թվականի համեմատ նվազել են (**տե՛ս աղյուսակ 1-ը**):

Աղյուսակ 1

2010 - 2019թթ. ստվերային տնտեսությունը՝ ըստ շաքարավազի, կարագի և բուսական յուղի (%)²

Տարի/Ցուցանիշ	Շաքարավազի ստվեր (%)	Կարագի ստվեր (%)	Բուսական յուղի ստվեր (%)
2010 թ.	-	20,2	25,4
2011 թ.	8,7	4,8	26,2
2012 թ.	5,9	6,3	8,2
2013 թ.	1,5	4,2	8,8
2014 թ.	-	-	8,9
2015 թ.	11,1	1,6	23,2
2016 թ.	15,4	-	21,6
2017 թ.	-	-	16,8
2018 թ.	-	-	13,9
2019 թ.	-	-	10,4

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացման նպատակով **աղյուսակ 2-ում** ներկայացվել է գնահատման մեխանիզմ, որը նկարագրում է կոռուպցիոն արարքի հավանականության ու հետևանքների մակարդակները, համաձայն որի, կոռուպցիոն ռիսկերի մակարդակների դասակարգումը

¹ Բանաձև (3)-ը մշակվել է հեղինակների կողմից:

² Աղյուսակ 1-ը կազմվել է հեղինակների կողմից՝ հաշվարկման արդյունքների հիման վրա: Աշխատանքում հաշվարկները կատարվել են 2010-2019 թվականների տվյալների հիման վրա, քանի որ 2020-2021 թվականների որոշ տվյալներ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել:

իրականացվել է «Հավանականության մակարդակների»¹ և «Հետևանքների մակարդակի»² հիման վրա: Ըստ այդմ՝

- Պետական կառավարման վարչարարական գործիքակազմի կիրառման գործընթացում, կոռուպցիոն ռիսկերի գնահատման մակարդակը թվային մեծությամբ գնահատվել է 16 միավոր (կրիտիկական)³, քանի որ այն դասվում է բավականին հաճախ տեղի ունեցող գործողությունների շարքին, որոնք ունեն հետևանքների բարձր մակարդակ: Կոռուպցիոն ռիսկերը պահանջում են անհապաղ ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման կամ վերահսկման միջոցներ: Կոռուպցիոն ռիսկի հավանականության և ազդեցության մակարդակները գնահատվել են համապատասխանաբար՝ 4-Հավանական և 4-Շատ բարձր միավորներով, քանի որ հավանական կամ գրեթե հաստատ մակարդակի դեպքում, կոռուպցիայի արարքը կատարվել է կարճաժամկետ հեռանկարում (հնարավոր է՝ նույնիսկ մի քանի անգամ), նշանակում է, որ այն կարող է կատարվել նաև առաջիկայում և կարող է կրկնվել, հետևաբար, հետևանքները ևս շատ բարձր մակարդակի կարող են լինել, ինչպես օրինակ՝ ֆինանսական մեծ կորուստներն ու պատասխանատվության միջոցները:

- Վերահսկողության համակարգի ուժեղացման գործընթացում, կոռուպցիոն ռիսկերի գնահատման մակարդակը թվային մեծությամբ գնահատվել է 12 միավոր (կրիտիկական)⁴, քանի որ այն ևս դասվում է բավականին հաճախ տեղի ունեցող գործողությունների շարքին ունենալով՝ հետևանքների բարձր մակարդակ: Նման կոռուպցիոն ռիսկերը պահանջում են անհապաղ ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման կամ վերահսկման միջոցներ: Կոռուպցիոն ռիսկի հավանականության և ազդեցության մակարդակները գնահատվել են համապատասխանաբար՝ 3-Հնարավոր է և 4-Շատ բարձր միավորներով, քանի որ հնարավոր մակարդակի դեպքում, կոռուպցիայի արարքը կարող է կատարվել միջնաժամկետ հեռանկարում, նշանակում է, որ այն կատարվել է կամ կարող է կատարվել մեկ տարվա ընթացքում և կարող է կրկնվել մի քանի անգամ, հետևաբար, հետևանքներն այս դեպքում ևս շատ բարձր մակարդակի կարող են լինել, ինչպես օրինակ՝ ֆինանսական մեծ կորուստներն ու պատասխանատվության միջոցները:

¹ Հավանականության մակարդակը գնահատվում է 1-4 բալային սանդղակով, որտեղ՝ 1-Երբեք, 2-Հազվադեպ, 3-Հնարավոր, 4-Հավանական մակարդակներն են: Հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից:

² Հետևանքների մակարդակը գնահատվում է 1-4 բալային սանդղակով, որտեղ՝ 1-Աննշան, 2-Միջին, 3-Բարձր, 4-Շատ բարձր: Հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից:

³ Հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից, իսկ հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից: Կոռուպցիոն ռիսկի գնահատման մակարդակի 12-16 միավորները համարվում են կրիտիկական:

⁴ Հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից, իսկ հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից: Կոռուպցիոն ռիսկի գնահատման մակարդակի 12-16 միավորները համարվում են կրիտիկական:

• Ազատ մրցակցային պայմանների ապահովման գործընթացում, կոռուպցիոն ռիսկերի գնահատման մակարդակը թվային մեծությամբ գնահատվել է 12 միավոր (կրիտիկական)¹, քանի որ այն դասվում է բավականի հաճախ տեղի ունեցող կոռուպցիոն գործողությունների շարքին, որոնք ունեն հետևանքների բարձր մակարդակ: Նման կոռուպցիոն ռիսկերը պահանջում են անհապաղ ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման կամ վերահսկման միջոցներ: Կոռուպցիոն ռիսկի հավանականության և ազդեցության մակարդակները գնահատվել են համապատասխանաբար՝ 4-Հավանական և 3-Բարձր միավորներով, քանի որ հավանական կամ գրեթե հաստատ մակարդակի դեպքում, կոռուպցիայի արարքը կատարվել է կարճաժամկետ հեռանկարում (հնարավոր է՝ նույնիսկ մի քանի անգամ), նշանակում է, որ այն կարող է կատարվել նաև առաջիկայում և կարող է կրկնվել, հետևաբար, հետևանքները ևս բարձր մակարդակի կարող են լինել, ինչպես օրինակ՝ զգալի ֆինանսական կորուստներն ու պատասխանատվության միջոցները:

Աղյուսակ 2

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեխանիզմ²

Գործընթաց	Կոռուպցիայի գործոն	Կոռուպցիոն գործոնի նկարագրություն	Կոռուպցիոն ռիսկի նկարագրություն	Հավանականություն	Ազդեցություն	Ռիսկի մակարդակ
Պետական կառավարման վարչարարական գործիքակազմի կիրառում	Պետական վերահսկողական համակարգի թերացում	Պետական հովանավորչական քաղաքականություն	Պետական հովանավորչական քաղաքականությունը տանում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտները թերհայտարարագրեն իրենց եկամուտները:	4	4	16
Վերահսկողության համակարգի ուժեղացում	Հակվածություն կոռուպցիոն գործարքների նկատմամբ	Մաքսային և հարկային վերահսկողության մասով թերացումներ, ստվերային տնտեսության առկայություն	Մաքսային սահմանի վրա ներկրվող այս ապրանքների մասով տեղի են ունենում թերհայտարարագրումներ:	3	4	12
Ազատ մրցակցային պայմանների ապահովում	Մոնոպոլ շուկայի առկայություն	Տնտեսվարողների կողմից շուկայում մոնոպոլ դիրքի գրավում	Վարչարարական գործընթացների արդյունավետության թուլացումը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտներին շուկայում ունենալ մենաշնորհային կարգավիճակ և ստվերային գործարքների մասով պատասխանատվություն չկրել:	4	3	12

Հողվածի հիմնական գիտական նորույթը: Կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացման նպատակով, պարենամթերքի (շաքարավազ, կարագ, բուսական յուղ) շուկաների վերլուծության արդյունքում բացահայտվել են ստվերային շրջանառության ծավալները օլիգոպոլ շուկաներում և

¹ Հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից, իսկ հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից: Կոռուպցիոն ռիսկի գնահատման մակարդակի 12-16 միավորները համարվում են կրիտիկական:

² Աղյուսակ 2-ը կազմվել է հեղինակների կողմից:

գնահատվել են կոռուպցիոն ռիսկերի առաջացման հետևանքով սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազեցմանը նպաստող ռիսկերը:

Եզրակացություն: Պարենամթերք դիտարկվել է այն առումով, որ տնտեսության ոչ ֆորմալ հատվածի ընդլայնումը առաջին հերթին ազդում է տնտեսական աղավաղումների վրա, որոնք էլ իրենց հերթին դոմինոյի էֆեկտով ազդում են նաև բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակի վրա, մասնավորապես, բաց տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ մեծ ծավալների է հասնում ներմուծումը, այսինքն՝ ոչ հավասար մրցակցային պայմանների առկայությունը և պետական հովանավորչական քաղաքականությունը նպաստում է օլիգոպոլ շուկաների առաջացմանը, իսկ օլիգոպոլ շուկաներն էլ առաջին հերթին սկսում են շահարկել բնակչության եկամուտներ, մասնավորապես՝ ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների մասով, ինչպիսիք են՝ պարենապրանքները, որոնք մտնում են ԳԻՖենի ապրանքների մեջ, արդյունքում՝ ինչքան այդ ապրանքների գները բարձրանա, այդ ապրանքների պահանջարկը կմնա կայուն, իսկ այդ ապրանքները, ինչպես հայտնի է զարգացած երկրների փորձից, կատարյալ մրցակցային շուկաներ ունեցող երկրներում պետք է հովանավորվեն պետության կողմից, քանի որ պետությունը և քաղաքականությունը պետք է խոչընդոտի, որ այդ ապրանքները գնային ամպլիտուդաների ենթարկվեն, քանի որ տվյալ դեպքում տնտեսվարողները կարող են գտնել միջոցներ թերհայտարարագրելու իրենց եկամուտները առաջացնելով ստվեր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաղդասարյան Զ.Յու., Հարությունյան Ա.Ա., «Հարկման արտերկրյա առաջավոր մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2011թ., 160 էջ:
2. Հարությունյան Վ.Լ., «Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2019թ., 200 էջ:
3. Պետրոսյան Լ.Մ., «Կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավորությունները ՀՀ շաքարավազի շուկայում», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ», Գիտական հոդվածների ժողովածու - 1(5) - Երևան, Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2021թ., 390 էջ:
4. Պետրոսյան Լ.Մ., «Հակակոռուպցիոն մեխանիզմների էությունը, դասակարգման սկզբունքները և գործառույթները», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ», Գիտական հոդվածների ժողովածու - 1(4) - Երևան, Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2021թ., 349 էջ:
5. ՀՀ Կենտրոնական բանկ - www.cba.am:
6. ՀՀ Վիճակագրական կոմիտե - www.armstat.am:

7. Бекряшев А. К., Белозеров И. П. Теневая экономика и экономическая преступность с. 459.
8. Есипов В.М., Теневая экономика: Учебное пособие. М.: ОН и ПНО Московского института МВД России, 1997, с. 123.
9. Сатарова Г. А., «Антикоррупционная политика», учебное пособие, М.- 2004, с. 368
10. Синюкова Т.Н., «Понятие и подходы к содержанию коррупции», Юридическая наука и практика: Вестник, Нижегородской академии МВД России. Выпуск № 1 (29) – 2015, с. 333-337.
11. Arriola Leonardo R., 2009. "Patronage and political stability in Africa." Comparative Political Studies no. 42 (10), pp.1339-1362.
12. Banerjee A., Hanna R. and Mullainathan S., "Corruption" – National Bureau of Economic Research, Cambridge, 2012, p. 72
13. Enste H. Dominik, The Shadow Economy and Institutional Change in Transition Countries: Keln 2002, p. 18.
14. Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., (2017), "Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies", Journal of Advanced Research in Law and Economics, Volume 8, Summer, 4 (26), p.1386
15. Petrosyan L.M., «Application of anti-corruption mechanisms in the field of pharmaceuticals of the Republic of Armenia», POLISH JOURNAL OF SCIENCE, № 48, VOL 1., Warszawa, Poland - 2022, 64 p.
16. Petrosyan L.M., «Corruption assessment mechanisms. Analysis of international experience and opportunities for its application in Armenia», ZNANSTVENA MISEL JOURNAL, №63, VOL 1, Slovenia - 2022, p.61
17. Schneider F., Shadow Economies and Corruption All Over the World: New Estimates for 145 Countries, Economics, 2007 July, p.41
18. Schneider, F., Buehn, A., & Montenegro, C. E. (2010). New Estimates for the Shadow Economies all over the World. International Economic Journal, 24(4), 443-461.
19. Tomas Jim (1999). Quantifying the black economy: 'Measurement without theory' yet again? The Economic journal, 109 (June), pp. 381-389.
20. Wallace C., Haerpfer C., Latcheva R., The Informal Economy in East-Central Europe 1991-1998, June 2004, p. 76.

References

1. Baghdasaryan Q. Y., Harowt'yownyan A.A., «Harkman aterkrya ar'ajavor motecowmneri' & dranc kirar'man hnaravorowt'yownnery' Hayastani Hanrapetowt'yownowm», Er&an 2011t'., 160 e'j:
2. Harowt'yownyan V.L., «Hayastani Hanrapetowt'yan stverayin tntesowt'yan pattwar'neri verlowc'owt'yown», HH GAA «Gitowt'yown» hratarakchowt'yown, Er&an 2019t'., 200 e'j:
3. Petrosyan L.M., «Kor'owpcion r'iskeri ar'ajacman hnaravorowt'yownnery' HH shaqaravazi showkayowm», «Social-tntesakan zargacman himnaxndirner, oronowmner,

- her'ankarner, lowc'owmner», Gitakan hodvac'neri jhoghovac'ow - 1(5) - Er&an, G.V.Plexanovi anvan R'TH Er&ani masnatwyowghi hrat., 2021t'.,e'j 390:
4. Petrosyan L.M., «Hakakor'owpcion mexanizmneri e'owt'yowny', dasakargman skzbowqnery' & gorc'ar'owyt'nery'», «Social-tntesakan zargacman himnaxndirner, oronowmner, her'ankarner, lowc'owmner», Gitakan hodvac'neri jhoghovac'ow - 1(4) - Er&an, G.V.Plexanovi anvan R'TH Er&ani masnatwyowghi hrat., 2021t'., e'j 349:
 5. HH Kentronakan bank - www.cba.am:
 6. HH Vitwakagrakan komite - www.armstat.am:
 7. Bekriyashev A. K., Belozarov I. P. Tenevaja jekonomika i jekonomicheskaja prestupnost' s. 459.
 8. Esipov V.M., Tenevaja jekonomika: Uchebnoe posobie. M.: ON i PNO Moskovskogo instituta MVD Rossii, 1997, s. 123.
 9. Satarova G. A., “Antikorrupcionnaja politika”, uchebnoe posobie, M.- 2004, 368s.
 10. Sinjukova T.N., “Ponjatie i podhody k sodержaniju korrupcii”, Juridicheskaja nauka i praktika: Vestnik, Nizhegorodskoj akademii MVD Rossii. Vypusk # 1 (29) – 2015, s. 333-337.
 11. Arriola Leonardo R., 2009. "Patronage and political stability in Africa." Comparative Political Studies no. 42 (10), pp.1339-1362.
 12. Banerjee A., Hanna R. and Mullainathan S., “Corruption” – National Bureau of Economic Research, Cambridge, 2012, 72 p.
 13. Enste H. Dominik, The Shadow Economy and Institutional Change in Transition Countries: Keln 2002, p. 18.
 14. Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., (2017), “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, Volume 8, Summer, 4 (26), pp. 1386.
 15. Petrosyan L.M., «Application of anti-corruption mechanisms in the field of pharmaceuticals of the Republic of Armenia», POLISH JOURNAL OF SCIENCE, № 48, VOL 1., Warszawa, Poland - 2022, p. 64.
 16. Petrosyan L.M., «Corruption assessment mechanisms. Analysis of international experience and opportunities for its application in Armenia», ZNANSTVENA MISEL JOURNAL, №63, VOL 1, Slovenia - 2022, p. 61.
 17. Schneider F., Shadow Economies and Corruption All Over the World: New Estimates for 145 Countries, Economics, 2007 July, p.41.
 18. Schneider, F., Buehn, A., & Montenegro, C. E. (2010). New Estimates for the Shadow Economies all over the World. International Economic Journal, 24(4), 443-461.
 19. Tomas Jim (1999). Quantifying the black economy: ‘Measurement without theory’ yet again? The Economic journal, 109 (June), pp. 381-389.
 20. Wallace C., Haerpfer C., Latcheva R., The Informal Economy in East-Central Europe 1991-1998, June 2004, p. 76.

**ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՍՏՎԵՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Լիլիթ Մանվելի Պետրոսյան
Արփինե Մեխակի Կյուրեղյան**

Համառոտագիր

Հոդվածի արդիականություն: Ցանկացած տնտեսության «քառասային, չկանխատեսվող և տարերային» զարգացման առաջնային մեխանիզմը կոռուպցիան է, ինչն առաջացնում է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներ, ինչպիսիք են՝ եկամուտների կրճատումն ու անհավասարաչափ բաշխումը, ոչ ֆորմալ զբաղվածությունը, խորացող աղքատությունը: Հետևաբար, կոռուպցիան կանխելու և կոռուպցիոն գործարքների նկատմամբ հակվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևողական հակակոռուպցիոն քաղաքականություն և գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է՝ բացահայտել սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների շուկաներում ստվերային տնտեսության և կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեխանիզմները ՀՀ-ում: Այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ **խնդիրները՝**

- բացահայտել կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավորությունները առաջին անհրաժեշտության ապրանքատեսակներից շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում,
- գնահատել ստվերային տնտեսության մեծությունը պարենային ապրանքների տեսանկյունից,
- մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմ:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել կոռուպցիայի և ստվերային տնտեսության վերաբերյալ ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի տարբեր տնտեսագետների գրքեր, գիտական հոդվածներ և ինտերնետային կայքեր:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ Կենտրոնական բանկի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից հրապարակած պաշտոնական տվյալներն ու հրապարակումները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության մեթոդներ և գործիքներ:

Հոդվածի գիտական նորույթը: Կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացման նպատակով, պարենամթերքի (շաքարավազ, կարագ, բուսական յուղ) շուկաների վերլուծության արդյունքում բացահայտվել են ստվերային շրջանառության ծավալները օլիգոպոլ շուկաներում և գնահատ-

վել են կոռուպցիոն ռիսկերի առաջացման հետևանքով սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազեցմանը նպաստող ռիսկերը:

Ստացված հիմնական արդյունքներ: Պարենամթերքի (շաքարավազ, կարագ, բուսական յուղ) շուկաների վերլուծության արդյունքում բացահայտվել են ստվերային շրջանառության ծավալները օլիգոպոլ շուկաներում և գնահատվել են կոռուպցիայի առաջացման հետևանքով սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը նպաստող ռիսկերը:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը: Հոդվածում կատարված վերլուծության հիմնական արդյունքների հիման վրա ներկայացվել են հասցեական միջոցառումներ և կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեխանիզմ:

Բանալի բառեր. կոռուպցիոն ռիսկ, ստվերային տնտեսություն, պարենային ապրանքներ, շրջանառության ծավալ, սպառում, սպառման նորմա, վերահսկողության համակարգ, ազատ մրցակցային պայմաններ, պետական հովանավորչական քաղաքականություն, պետական կառավարման գործիքակազմ

МЕХАНИЗМЫ ОЦЕНКИ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ И КОРРУПЦИОННЫХ РИСКОВ НА ПРОДОВОЛЬСТВЕННЫХ РЫНКАХ РА

Лилит Манвеловна Петросян
Арпине Мехаковна Кюреган

Аннотация

Актуальность статьи. Основным механизмом «хаотического, непредсказуемого и естественного» развития любой экономики является коррупция, вызывающая тяжелые социально-экономические последствия, такие как снижение доходов и их неравное распределение, неформальная занятость и углубление бедности. Поэтому для предотвращения коррупции и снижения склонности к коррупционным сделкам необходимо проводить последовательную антикоррупционную политику и внедрять эффективный инструментарий управления.

Цель статьи. Целью данной статьи является выявление механизмов оценки теневой экономики и коррупционных рисков на продовольственных рынках Армении и для решения этого вопроса поставлены **следующие задачи:**

- Выявление возможностей коррупционных рисков от товаров первой необходимости на рынках сахара, сливочного и растительного масла;
- Оценить размер теневой экономики с точки зрения продуктов питания;
- Разработать механизм повышения эффективности оценки коррупционных рисков.

Методология. Теоретической базой для исследования послужили книги, научные статьи и сайты о коррупции и теневой экономике как зарубежных, так и армянских экономистов.

Необходимыми информационными базами для исследования являются официальные данные и публикации, опубликованные Статкомитетом РА, Комиссией РА по предупреждению коррупции, Центральным банком РА, Антикоррупционным агентством Трансперенси Интернэшнл Центр.

В ходе исследования использовались методы и инструменты статистического, сравнительного, эмпирического, экономического анализа.

Научная новизна статьи. В целях повышения эффективности оценки коррупционных рисков в результате анализа рынков продовольствия (сахара, сливочного, растительного масла) были выявлены объемы теневого оборота на олигополистических рынках и оценены риски, способствующие снижению социально-экономических показателей в результате этого. коррупционных рисков.

Получены основные результаты. Анализ рынков продуктов питания (сахар, масло сливочное, растительное масло) позволил выявить объемы теневого оборота на олигополистических рынках и оценить риски, способствующие ухудшению социально-экономической ситуации из-за коррупции.

Возможность применения полученных результатов. По основным результатам анализа в статье представлены адресные меры и механизм оценки коррупционных рисков.

Ключевые слова: коррупционный риск, теневая экономика, продовольственные товары, товарооборот, потребление, норма потребления, система контроля, свободная конкуренция, государственная спонсорская политика, инструменты государственного управления

MECHANISMS FOR ASSESSING THE SHADOW ECONOMY AND CORRUPTION RISKS IN THE FOOD MARKETS IN RA

Lilit Manvel Petrosyan
Arpine Mekhak Kyuregyan

Abstract

Urgency of the article. The primary mechanism for the "chaotic, unpredictable and natural" development of any economy is corruption, which causes severe socio-economic consequences such as income reduction and unequal distribution, informal employment, and deepening poverty. Therefore, in order to prevent corruption and reduce the tendency towards corrupt transactions, it is necessary to implement a consistent anti-corruption policy and implement an effective management toolkit.

Purpose of the article. The purpose of this article is to identify the mechanisms for assessing the shadow economy and corruption risks in the food markets in Armenia and to address this issue, and to solve that purpose **the following tasks** have been set at work:

- Identify opportunities for corruption risks from essential commodities in the sugar, butter and vegetable oil markets;
- Assess the size of the shadow economy in terms of food;
- Develop a mechanism to increase the effectiveness of corruption risk assessment.

Methodology. Theoretical basis for the research was books, scientific articles and websites on corruption and the shadow economy by both foreign and Armenian economists.

The necessary information bases for the research are the official data and publications published by the RA Statistical Committee, the RA Commission for the Prevention of Corruption, the Central Bank of the Republic of Armenia, the Transparency International Anti-Corruption Center.

Methods and tools of statistical, comparative, empirical, economic analysis were used during the research.

The main scientific novelty of the article. In order to increase the effectiveness of corruption risk assessment, the analysis of food (sugar, butter, vegetable oil) markets revealed the volume of shadow turnover in oligopolistic markets and assessed the risks that contribute to the reduction of socio-economic indicators as a result of corruption risks.

Main results obtained. The analysis of food (sugar, butter, vegetable oil) markets revealed the volume of shadow turnover in oligopolistic markets and assessed the risks that contribute to the deterioration of the socio-economic situation due to the emergence of corruption.

The possibility of applying the obtained results. Based on the main results of the analysis, the article presents targeted measures and a mechanism for assessing corruption risks.

Keywords: corruption risk, shadow economy, food products, turnover, consumption, consumption rate, control system, free competition, state sponsorship policy, public administration tools.